

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՍԱԾՈՒՑՔԻ ԱՌԱՋ

(Նեկրասով)

Ահա՛ գեղեցիկ հանդիսամուսք:
 Ամբողջ փաղաք մի՛ս՝ սօն օրերին,
 Մի ստեղծական ցառով համակուած,
 Մօտենում է այդ սենյած դռներին:
 Անունն ու պաշտօն իրանց գրելով,
 Հիւրերը նորից սներն են ցում,
 Եւ այնքա՛ն են գոհ իրանց արածով,
 Որ կարծես չունեն էլ ուրիշ կոչում:
 Իսկ լի օրերին, այդ շփոթ մուսքում,
 Լցում են աղփաս եւ թռուտ մարդիկ.
 Ե՛ւ ծագումով, ե՛ւ պաշտօն խնդրող,
 Ե՛ւ զառամեալ ծեր, ե՛ւ ուրբեայրիք:
 Սուրհանդակներն էլ առաւօտեան վաղ
 Թղթելով նրա մօտ գրնում են, գալիս,
 Ումանք դառնալով երգում են ուրախ,
 Իսկ շատ խնդրատու դառնազին լալիս:

Մի անգամ տեսայ ես՝ ոռոս գիւղացիք
 Ձերմ աղօթելով մօտեցան մուսքին
 Եւ մի կողմ փառած կանգ առան լոթի,

Շէկ գլուխները քառե արած կրծքին:
 —«Թո՛ղ մեզ»—ասացին ժանճ դոնապանին,
 Սրտում կրելով ե՛ւ յոյս, ե՛ւ սանջանք:
 Նա աչքի սակով նայեց հիւրերին,
 Գեղեցիկ չէին արսափուս նրանք:
 Երես ու ձեռքները արեւից այրուած,
 Գզգզուած բանկոն ուսին կիսամերկ.
 Կորացած մէջքին պարկը շալակած,
 Վզին խաչ կախած, եւ արիւնաներկ
 Ոսներին հագած կոպիս սրէխներ,
 (Երեւի նրանք շատ երկար օրեր
 Ճամբայ են եկել հեռու նահանգից):
 —«Դոնա՛պան, լսուեց մի ձայն վերելից,
 Քե՛ր դրանց դէն, մեր մեծաւորը
 Ձէ սիրում չլո՞ս, կեղձո՞ս ամբոխին»...
 Եւ դուռը փակուեց, պահ մի կանգնելով,
 Հէգ պանդուխտները գրպանը բացին,
 Բայց դոնապանը չը թողեց, լուսան
 Քիչ էր անկասկած, եւ ուղի ընկան,
 Այրուելով սաստիկ արեւի տապից,
 Արդար դասաստան խնդրելով Տէրից:
 Ձեռքները նրանք անյոյս շարժելով,—
 Եւ քանի աչքս տեսնել տակաւին
 Կարող էր նրանց,—բաց գլուխներով
 Վշտահար, ինչու-լուռ գնում էին:

Իսկ տէրը այդ պէրն, շեղ պալատի
 Դեռ ննջում էր խոր եւ անդորր քնով...
 Դո՛ւ, որ գնում ես միշտ նախանձելի՝
 Անառակութեամբ, անամօթ ստով
 Եւ կեր ու խումով լի զագիր կեանք,
 Զարթի՛ր, դեռ շատ կան հանդիմներ անսանձ,
 Դարձո՛ւր, ձեռքիդ է նրանց փրկանք,
 Բայց լացը ի՛նչ փոյթ բախտաւոր մարդկանց...

Քեզ անաւոր չէ շանքը երկնի,
 Իսկ երկրայինը ունես քո ձեռքում,
 Եւ որքան վշտեր անելանելի
 Այդ անյայտ մարդիկ կրում են արտում:
 Ի՛նչ փոյթ խեղճերի այդ արցունք, քախիծ,
 Ի՛նչ փոյթ քեզ թուառ ժողովուրդը հեգ.
 Ինչպէս անվերջ տօն քո անուշ կեանքից,
 Ձեռ կարողանայ սքափուել երբէ:
 Եւ ինչո՞ւ համար. խեղճ ժողովրդի
 Բարօրութիւնը դու անուանում ես
 Գրչակի լոկ խաղ: Է՛հ, առանց այդ էլ
 Դու փառքով կ'ապրես, փառքով կը մեռնես:

Իդիլիական կեանքից էլ խաղաղ,
 Անյոյզ կը սահեն ծեր օրերը քո
 Եւ Սիցեիայի երկնի տակ չքնաղ
 Ծառերի բոյրի հովանու ներքոյ,
 Մեանչանալով, թէ ի՛նչպէս ծովում
 Արեւն է սուգում ռսկի շերտերով,
 Եւ օրորուելով Միջերկրականի
 Վէտ ալիքների մեղմիկ երգերով,
 Դու մանկան նման կը ննչես, պաշած
 Քո ընտանիքի սիրով, խնամքով,
 (Որ սպասում է անհամբեր մահիդ)
 Անիւնդ մեզ մօտ կը բերեն շուտով,
 Որպէս զի յարգեն հանդէտով քաղման,
 Եւ կ'իջնես, հերո՛ս, դու սառ գերեզման...
 Հայրենի երկրից անիծուած գաղտուկ,
 Բայց փառաբանուած գովքով մեծաշուք...

Եւ սակայն ինչո՞ւ այսպիսի անձր
 Խեղճ մարդկանց համար անհանգիստ անել,
 Հէնց մենք տրանցից վրէժ չը հանե՞նք.
 Եւ անվտանգ է... Եւ մի բանում էլ

Պասնառ կը գտնենք մխիթարութեան...
 Ինչ փոյթ թէ խեղճը տուժէ ամեն օր,
 Այդպէս է կամքը նախախնամութեան...
 Դրան վաղուց է ռամիկը սովոր:

Քաղաքից հեռու անտառի մասին
 Նրանք ունեցածը օղիի կը սան,
 Եւ համբայ կ'ընկնեն ինչո՛ւր, թախծալի,
 Եւ կը հառաչեն... Երկի՛ր հայրենի,
 Օ՛, յիշի՛ր դու ինձ այն օրեւանը—
 Այդպիսի անկիւն ես չեմ տեսել դեռ,
 Ուր եւ հերկողը եւ պահպանը,
 Ուր ռուս ռամիկը միշտ չը հառաչէր:
 Նա հառաչում է դաւաճելով, համբիւն,
 Նա հառաչում է բանտում, ամստում,
 Հանգիստի մէջը՝ շրջան ձեռներին,
 Կալում, դէզի սակ, սափարակներում՝
 Գիշերն անցնելով բաց երկնքի ներքոյ.
 Նա հառաչում է իր սան մէջ անտառ,
 Աստու արեւի լոյսից էլ դժգոհ,
 Ամենայն մի խուլ փաղափում խեղճուկ.
 Նա հառաչում է դաւաճելով
 Եւ պալատների դռների առաջ,
 Նա հառաչում է սիրտը վրձնով լի:
 Գնա՛ Վօլգի ափ, Երջի՛ր ձախ ու աջ,
 Ո՛ւր հառաչն է այն հնչում տրամադին,
 Ռուսաց լայնարձակ գետի եզերում:
 Երգ անուն տուինք այդ հառաչանքին,
 Որ հէգ մաւաքեալ բուրլակն է երգում:

Ա՛հ, Վօլգա՛, Վօլգա՛, գարնան ջրառաս
 Դաւաճելով դու չես հեղեղում ա՛յնման,
 Ո՛րքան ամբոխի վրձնով յուսահաս
 Լցուած է հողը մեր հայրենական:

Որտեղ ժողովուրդ, այնտեղ ե՛ւ հառաչ...
 Է՛հ, եղբայր, մի՛նչ ե՞րբ անվերջ հառաչես,
 Արդեօք ոյժով լի դու պիտի զարթնե՞ս,
 Թե՛ հակասագրի օրէնքի առաջ
 Խոնարհուած եւ լուռ՝ ինչ որ տակաւին
 Դու կարող էիր, ողջ կասարեցիր,
 Երգ ստեղծելով հառաչի նման,
 Եւ ապա հոգով ընդմիջ՝ ննչեցիր...

Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ